ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №3
«23» փետրվարի 2026թ. № ՇՄՆ-COP17-26/01 պայմանագրի

ք.Երևան «18» «06» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պ/կ Արկադի Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Սիմոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «№ ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.2, 2.4.1, 2.2.4 և 7.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «№ ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագիրը լրացնել՝

1.1.1. վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն Հավելված №1-ի,

1.1.2. Լայնամասշտաբ տեղեկատվական և գովազդային արշավ՝ Հայաստանում անցկացվող COP17 համաժողովի մասին հնարավորինս լայն լսարանին տեղեկացնելու նպատակով, միջոցառումների անցկացման վայրերի, կազմակերպչական գործընթացներում ներգրավված տրանսպորտային միջոցների և այլ տարրերի բրենդավորում միջոցառման ծառայությունների մատուցման (ձեռքբերման) փուլային նկարագրով (տեխնիկական բնութագիր)՝ համաձայն Հավելված №2-ի,

1.1.3. Լայնամասշտաբ տեղեկատվական և գովազդային արշավ՝ Հայաստանում անցկացվող COP17 համաժողովի մասին հնարավորինս լայն լսարանին տեղեկացնելու նպատակով, միջոցառումների անցկացման վայրերի, կազմակերպչական գործընթացներում ներգրավված տրանսպորտային միջոցների և այլ տարրերի բրենդավորում միջոցառման նախահաշիվը՝ համաձայն Հավելված №3-ի:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Կատարողը պարտավոր է Համաձայնագրի կատարման նպատակով կնքված պայմանագրերի կամ համաձայանագրերի կամ հաշիվ-ապրանքագրերի կամ երրորդ անձանց կողմից ներկայացված, Համաձայնագրով նախատեսված ծառայությունների կամ աշխատանքների գնագոյացմանը վերաբերող այլ փաստաթղթերի պատճեն, դրանք կնքելուց կամ հաստատելուց կամ ստանալուց հետո 25 (քսանհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Պատվիրատուին:

2.3. Պատվիրատուին տրամադրել Պայմանագրի 2.3.2 կետով նախատեսված «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի համաձայնությունը (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ստանալու դեպքում)՝ Ծառայության մատուցման փուլային նկարագրի ու հանձնման-ընդունման արձանագրության վերաբերյալ:

2.4. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման նպատակով պարտավորություններ է ստանձնել երրորդ անձանց առջև, սակայն Պատվիրատուի գործողությունների կամ անգործության հետևանքով կամ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը կամ Համաձայնագիրը դադարեցնելու կամ չեղարկելու հետևանքով երրորդ անձանց առջև առաջանում են նրանց հետ կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորություններ, ապա Պատվիրատուի կողմից այդ պարտավորություններն ամբողջ ծավալով ենթակա են հատուցման՝ Կատարողի կողմից հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու, ինչպես նաև ստանձնած պարտավորությունների շրջանակում սեփականության իրավունքով ձեռք բերված բոլոր նյութական արժեքները (առկայության դեպքում) և արդյունքային ցուցանիշները Պատվիրատուին հանձնելու դեպքում:

2.5. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման ընթացքում հրաժարվում է այն կատարելուց, ապա Կատարողը պարտավոր է վճարել Պատվիրատուին Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև հատուցել Համաձայնագրի 1.1.4 կետով սահմանված գնման առարկան այլ անձանցից

ձեռքբերման դեպքում գների դրական տարբերությունը: Սույն կետով նախատեսված դեպքերում Կողմերը կազմում են փոխադարձ հաշվարկների ակտ, որով.

ա) Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում, իսկ Պատվիրատուն ընդունում է մինչ հրաժարման կամ լուծման պահը Համաձայնագրի արդյունքները,

բ) Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին վերադարձնել Համաձայնագրի շրջանակում կատարված բոլոր վճարումները, եթե դրանք չեն ծածկում փոխադարձ հաշվարկների ակտով կատարված ծախսերը:

2.6. Կանխավճարը մարվում է մինչև Համաձայնագրով նախատեսված ծառայությունների ավարտը՝ Պայմանագրի 4.2 կետով նախատեսված կարգով՝ հանձնման-ընդունման գործընթացի կազմակերպմամբ:

2.7. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

2.8. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագրով նախատեսված ֆինանսական միջոցների հատկացման մասին ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն ք.Երևան, Կառավարական տուն 3 ՖՆ գործառնական վարչություն ՀՀ 900011066439 ՀՎՀՀ 02507198 Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պ/կ ***Ա.Խաչատրյան*** (ստորագրություն) **Կ.S.**	**«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ** ք.Երևան, Նալբանդյան 25 ա, բն. 58 «Էվոկաբանկ» ՓԲԸ ՀՀ 1660030207649200 ՀՎՀՀ 02893152 «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի տնօրեն ***Հ.Սիմոնյան*** (ստորագրություն) **Կ.S.**

Հավելված №1
«18» «06» 2026թ. կնքված
համաձայնագիր №3
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Դոպինգ Սպեյս» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

Ծառայության												
հ/հ	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**անվանումը**	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)**										
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	**Ընդամենը**
1	79951112	Լայնամասշտաբ տեղեկատվական և գովազդային արշավ՝ Հայաստանում անցկացվող COP17 համաժողովի մասին հնարավորինս լայն լսարանին տեղեկացնելու նպատակով, միջոցառումների անցկացման վայրերի, կազմակերպչական գործընթացներում ներգրավված տրանսպորտային միջոցների և այլ տարրերի բրենդավորում	-	-	-	-	-	54 600 000	54 600 000	54 600 000	54 600 000	54 600 000	**54 600 000**

Հավելված №2
«18» «06» 2026թ. կնքված
համաձայնագիր №3
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՒԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Լայնամասշտաբ տեղեկատվական և գովազդային արշավ՝ Հայաստանում անցկացվող COP17 համաժողովի մասին հնարավորինս լայն լսարանին տեղեկացնելու նպատակով: Միջոցառումների անցկացման վայրերի, կազմակերպչական գործընթացներում ներգրավված տրանսպորտային միջոցների և այլ տարրերի բրենդավորում:

Հաղորդակցման ռազմավարություն և PR աջակցություն

Մատուցման ենթակա փուլային ծառայության սույն նկարագիրը մշակվել է Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.1. կետի և Հավելված 1.1-ի 2-րդ կետի «բրենդինգի և ցուցանակների պատրաստում հանդիպման անցկացման ողջ տարածքում» պարբերությամբ սահմանված պահանջների կատարման նպատակով:

Ամփոփագիր
2026 թվականին Հայաստանը կհյուրընկալի *ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (CBD COP17)*՝ միջազգային բարձր մակարդակի միջոցառում (այսուհետ *COP17*), որը կհամախմբի պետությունների, միջազգային կազմակերպությունների, գիտական համայնքի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: Այս իրադարձությունը հնարավորություն է Հայաստանի Հանրապետության համար ներկայանալու որպես գլոբալ բնապահպանական օրակարգում պատասխանատու և ակտիվ դերակատար:

Նպատակը
Կիրառելով լայնամասշտաբ տեղեկատվական և գովազդային արշավի համար մշակված հաղորդակցման գաղափարախոսությունը, մոտեցումները, գործիքակազմը և հարթակները (այսուհետ՝ Հաղորդակցման ռազմավարություն)՝ նպատակ է դրվում Հայաստանը ներկայացնել որպես հյուրընկալ, մշակութային հարուստ և կենսաբազմազանությամբ առանձնացող երկիր: Միաժամանակ ընդգծվում է տարածաշրջանում Հայաստանի կենսաբազմազանության բացառիկությունը և դրա պահպանության կարևորությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ

COP17-ի անցկացմամբ Հայաստանը ստանձնում է նախագահող երկրի դեր հաջորդ երկու տարիների ընթացքում՝ ունենալով կարևոր դեր գլոբալ բնապահպանական օրակարգում:
Հաղորդակցման արշավի նպատակն է բարձրացնել *COP17*-ի առանձնահատկության և նշանակության ընկալումը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում երբևէ իրականացվող ամենամասշտաբային և ամենաազդեցիկ համաշխարհային միջոցառումներից մեկը, ներկայացնել դրա կարևոր նշանակությունը երկրի համար և ձևավորել հանրային ու միջազգային մակարդակում համապատասխան ընկալում, որ կենսաբազմազանության պահպանությունը յուրաքանչյուրիս օրակարգի կարևոր բաղադրիչն է:

Այս գործընթացը կնպաստի ոչ միայն Հայաստանի միջազգային հեղինակության և տեսանելիության ամրապնդմանը, այլև կձևավորի բարենպաստ պայմաններ խոշոր ներդրումային ծրագրերի ներգրավման համար՝ խթանելով երկրի տնտեսական առաջընթացը և երկարաժամկետ կայուն զարգացումը:

Բնապահպանական օրակարգի տնտեսական արդյունավետությունը հաստատվում է նաև միջազգային գնահատականներով: *CBD COP* համաժողովներ հյուրընկալած երկրներում դիտվում է հետագա ներդրումային ակտիվության աճ՝ պայմանավորված երկրի միջազգային դիրքի ամրապնդմամբ և օրակարգի նկատմամբ վստահության բարձրացմամբ:

Միաժամանակ, ըստ Եվրոպական հանձնաժողովի գնահատականների, բնության վերականգնման ուղղությամբ իրականացված յուրաքանչյուր *1 եվրոյի* ներդրումը հասարակությանը վերադարձնում է միջինը *4-ից մինչև 38* եվրոյի համարժեք տնտեսական կշիռ՝ մաքուր ջրի ապահովման, հողերի առողջացման, կլիմայական կայունության և կենսաբազմազանության պահպանության տեսքով (European Commission, Nature Restoration Regulation): *https://environment.ec.europa.eu/topics/nature-and-biodiversity/nature-restoration-regulation_en*

Մոտեցումը

Ռազմավարությունը ձևավորվել է *CBD* գործընթացների և միջազգային գործընկերների հետ աշխատանքային փորձի ընթացքում ձևավորված հաղորդակցման մոտեցումների հիման վրա՝ հաշվի առնելով
COP17-ի գլոբալ հաղորդակցման առաջնահերթությունները, ***Կունմինգ-Մոնրեալի կենսաբազմազանության գլոբալ շրջանակի*** *(KMGBF)*-ի բովանդակային նպատակները, *COP17*-ի բրենդային նարատիվը
և Հայաստանի Հանրապետության՝ որպես հյուրընկալող երկրի ռազմավարական առաջնահերթությունները՝ ապահովելով դրանց համահունչ և համակարգված ներկայացում հաղորդակցման ուղերձներում:

Հաշվի առնելով, որ միջոցառման թիրախային լսարանները բազմազան են և ներառում են ինչպես օտարերկրյա շահագրգիռ խմբեր (բնապահպանական կամ կենսաբազմազանության նպատակներ հետապնդող քաղաքացիական հասարակություն), միջազգային պատվիրակություններ, փորձագիտական համայնք և մեդիա, այնպես էլ հայաստանյան հանրություն: Հաղորդակցման ռազմավարությունը մշակված է՝ հաշվի առնելով տարբեր լսարանների առանձնահատկությունները:

Հաղորդակցման ռազմավարությունը կառուցված է բազմաալիքային և փուլային տրամաբանությամբ՝ ապահովելով, որ յուրաքանչյուր թիրախային խմբի համար կիրառվեն համապատասխան բովանդակային ուղերձները, ձևաչափեր և հաղորդակցման հարթակներ՝ առավել արդյունավետ ընկալման և ներգրավվածության ապահովման նպատակով:

Ակնկալվող արդյունքը

COP17-ի շրջանակում նպատակ է դրվում ամրապնդել Հայաստանի միջազգային հեղինակությունը՝ ներկայացնելով երկիրը որպես կենսաբազմազանությամբ հարուստ և բնապահպանության

նկատմամբ բարձր պատասխանատվություն ունեցող պետություն, ինչպես նաև բարձրացնել միջազգային հետաքրքրությունն ու ուշադրությունը Հայաստանի նկատմամբ:

Արշավի արդյունքում ակնկալվում է բարձրացնել Հայաստանի ճանաչելիությունը, ներկայացնել երկրի մշակութային և բնական ներուժը, ինչպես նաև նպաստել ներդրումային, զբոսաշրջային և միջազգային համագործակցության հնարավորությունների ընդլայնմանը:

Նախաբան

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԳԼՈԲԱԼ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԿԵՆՏՐՈՆ. *COP17*

Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է *ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (CBD COP17)* հյուրընկալման բացառիկ առաքելությունը: *2026* թվականին Երևանում կայանալիք այս բարձր մակարդակի գագաթնաժողովը կդառնա համաշխարհային դիվանագիտության և բնապահպանական առաջնորդության կարևոր հարթակ:
Միջոցառումը մեկտեղելու է պետությունների ղեկավարների, միջազգային կառույցների, փորձագիտական վերնախավի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներուժը:
COP17-ը Հայաստանի համար պատմական հնարավորություն է՝ առաջնորդելու կենսաբազմազանության պահպանության և կայուն զարգացման շուրջ գլոբալ երկխոսությունը՝ նպաստելով բնապահպանական մարտահրավերների հաղթահարմանն ուղղված հիմնարար որոշումների կայացմանը:
Միջոցառման միջազգային բացառիկ մասշտաբն ու ռազմավարական նշանակությունը թելադրում են համակարգված և բազմաշերտ Հաղորդակցման ռազմավարության կիրարկում: Այն կառուցված է համահունչ ուղերձների և առաջխաղացման ինտեգրված մեխանիզմների վրա, որոնք կոչված են ապահովելու միջոցառման գլոբալ տեսանելիությունն ու անվիճելի ճանաչելիությունը թե՛ միջազգային բարձրագույն հարթակներում, և թե՛ ազգային մակարդակում:
Այս համապարփակ մոտեցումը հնարավորություն է տալիս կապիտալիզացնել միջոցառման քաղաքական և բնապահպանական կշիռը՝ ձևավորելով միասնական տեղեկատվական էկոհամակարգ, որը թիրախային լսարաններին է հասցնում Հայաստանի՝ որպես գլոբալ օրակարգ ձևավորող պետության պատասխանատու և առաջադեմ կերպար:
COP17-ի միջազգային կարգավիճակը թելադրում է փուլային ու համակարգված հաղորդակցական արշավի իրականացում: Օգտագործելով մեդիա և հանրային հաղորդակցության գործիքակազմի ողջ ներուժը՝ Հաղորդակցման ռազմավարությունը նպատակաուղղված է *COP17*-ի՝ որպես բացառիկ հեղինակություն ունեցող գլոբալ իրադարձության ընկալման ձևավորմանը:

COP17-ի շրջանակներում իրականացվող աշխատանքները դուրս են դասական PR-ի սահմաններից՝ հանդիսանալով **ռազմավարական հաղորդակցություն:** Սա համապարփակ մոտեցում է, որը միտված է պետական շահերի և գլոբալ արժեքների ներդաշնակեցման վրա: Ի տարբերություն կարճաժամկետ կամ տեղային խնդիրներին ուղղված արշավների՝ Հաղորդակցման ռազմավարությունը կենտրոնացած է մրցակցային համաշխարհային միջավայրում Հայաստանի երկարաժամկետ հեղինակության ձևավորման վրա:

1. *Հաղորդակցման ռազմավարություն*

COP17-ի առաջխաղացման շրջանակում հաղորդակցման ռազմավարությունը հանդիսանում է ամբողջ ծրագրի հիմքը, որի վրա կառուցվում են բոլոր հետագա գործողությունները՝ ստեղծագործական, մեդիա և արտադրական:
Առանց այս բաղադրիչի իրականացվող ցանկացած ակտիվություն չի ապահովում անհրաժեշտ արդյունավետությունը, քանի որ չի հիմնվում հստակ սահմանված նպատակների, թիրախային լսարանների և ազդեցության հստակ ձևակերպված բովանդակային ուղերձների վրա:
Այս ծառայությունը ապահովում է, որ ամբողջ ծրագիրը գործի որպես մեկ համակարգ՝ ոչ թե առանձին գործողությունների հավաքածու:

1.1. Ռազմավարական ուղղություններ

1.1.1. Հաղորդակցման հիմնական ռազմավարություն

Սահմանվում է *COP17*-ի հաղորդակցման ընդհանուր տրամաբանությունը՝
ինչ է ներկայացվում, ինչ արժեք է փոխանցվում և ինչ ընկալում պետք է ձևավորվի:
COP17-ը դիրքավորվում է ոչ որպես ուղղակի միջոցառում, այլ որպես՝

- միջազգային ազդեցություն ունեցող հարթակ
- ներդրումային և քաղաքական նշանակություն ունեցող գործընթաց
- Հայաստանի դիրքի ամրապնդման գործիք

1.1.2. Թիրախային լսարանների սահմանում և բովանդակային ուղերձների մշակում

Մշակված է լսարանների բազմաշերտ համակարգում, յուրաքանչյուր խումբ դիտարկվում է առանձին նպատակներով և հաղորդակցման տրամաբանությամբ՝

- **ՀՀ հասարակություն** → իրազեկվածության բարձրացում և ակտիվ ներգրավվածության ձևավորում
- **միջազգային պատվիրակություններ** → վստահելի գործընկեր երկրի և կենսաբազմազանության օրակարգում ակտիվ դերակատարի ընկալման ձևավորում
- **ներդրողներ և բիզնես համայնք** → հնարավորությունների տեսանելիություն և տնտեսական ներուժի ներկայացում
- **մեդիա** → օրակարգ ձևավորող բովանդակության ապահովում
- **սփյուռք** → մասնակցություն և տեղեկատվության տարածում
- **միջոցառման մասնակիցներ** (Green Zone) → ներգրավվածություն և ակտիվ մասնակցության ապահովում, ներառյալ՝
  - տարածաշրջանային մասնակիցներ (մասնավորապես՝ Վրաստան)՝ որպես անմիջական գործընկեր և տարածաշրջանային ներգրավվածության կարևոր օղակ
  - այլ հետաքրքրված երկրներ, որոնք կներկայացվեն Green Zone-ում իրենց նախաձեռնություններով և ցուցադրություններով
  - միջազգային էկոակտիվիստներ և ոլորտային համայնքներ, որոնք ձևավորում են հանրային և գլոբալ օրակարգը

Յուրաքանչյուրի համար մշակվում է առանձին բովանդակային ուղերձների փաթեթ և հաղորդակցման ուղիների ընտրություն:

1.1.3. Արշավի փուլային կառուցվածք

COP17-ի առաջխաղացման ամբողջ հաղորդակցման ռազմավարությունը և մեդիա պլանավորումը կառուցված է երկփուլ տրամաբանությամբ՝ ապահովելով ինչպես նախնական իրազեկում, այնպես էլ ակտիվ հանրային և միջազգային ուշադրություն:

Փուլ 1. **Ճանաչելիության ձևավորում** *(հունիս 15 – օգոստոս 30)*
Այս փուլը ուղղված է COP17-ի հեղինակության, մասշտաբի և միջազգային նշանակության ներկայացմանը, ինչպես նաև հանրության շրջանում բարձր ճանաչելիության և վստահության ձևավորմանը: Գովազդային տեղաբաշխումը կիրականացվի բարձր վարկանիշ ունեցող մեդիա ալիքներում՝ կենտրոնանալով առավել դիտելիության ժամանակային բլոկների վրա և ապահովելով հաճախակի, բայց ոչ ագրեսիվ ներկայություն:

Այս փուլի բովանդակային ուղերձների հիմնական շեշտադրումը հիմնված է *COP17*-ի միջազգային մակարդակի, նշանակության և դրա կարևորության ներկայացման վրա: Մեդիա պլանավորումը կապահովի բարձր ծածկույթ և միջին հաճախականություն՝ ձևավորելով ուժեղ իմիջային ազդեցություն:

Փուլ 2. **Ակտիվացում** *(սեպտեմբեր 1 – հոկտեմբեր 30)*
Այս փուլը միտված է լայն հանրային իրազեկման ապահովմանը՝ ներկայացնելով COP17-ի ժամկետները, ձևաչափերը և սպասվող ակտիվությունները: Այս փուլի հաղորդակցությունները դառնում են ավելի ինտենսիվ և տեղեկատվական՝ ապահովելով բարձր հաճախականություն և կուտակային ազդեցություն մեդիա ալիքներում:

Բովանդակային ուղերձները ունեն ավելի հստակ և տեղեկատվական բնույթ՝ ընդգծելով միջոցառման հիմնական տեղեկատվությունը և խթանելով հանրային իրազեկվածությունը: Այս փուլում կապահովվի նաև քաղաքային տարածքում բարձր տեսանելիություն և «մասշտաբային ներկայության» էֆեկտ:

2. Ռազմավարական ստեղծագործական հայեցակարգ

COP17-ի առաջխաղացման ռազմավարական ստեղծագործական հայեցակարգի շրջանակում ձևակերպված է միասնական ստեղծագործական ուղղությունը՝ ներառյալ գլխավոր գաղափարը, թեմատիկ առանցքը, հաղորդակցման տոնը և նարատիվը, ինչպես նաև ապահովված է բոլոր հաղորդակցման նյութերի համապատասխանությունը հաստատված բրենդի արժեքներին և ինքնությանը:

Այն հիմնված է *COP17*-ի առանցքային գաղափարախոսության, հեռանկարային տեսլականի և Հաղորդակցման ռազմավարական նպատակների վրա: Այն ներկայացնում է միասնական արժեքային համակարգ, որի հաղորդակցային տրամաբանությունը մշակված է բազմաշերտ լսարանների համար:

Ստեղծագործական հայեցակարգը կառուցված է այնպիսի տրամաբանությամբ, որը հավասարապես ընկալելի է թե՛ տեղի հասարակությանը, թե՛ միջազգային գործընկերների և մասնակիցների ու համաշխարհային հանրությանը՝ ներկայանալով որպես արդիական և գլոբալ նշանակություն ունեցող օրակարգ:

Այն ապահովում է միջոցառման բովանդակային հասանելիությունը՝ վերացնելով մշակութային ու լեզվական պատնեշները և ձևավորելով միասնական ընկալում միջոցառման առաքելության շուրջ:
Ռազմավարական ստեղծագործական հայեցակարգը խարսխված է մշակութային բարձր զգայունության, ներառականության և միջազգային հանդուրժողականության սկզբունքների վրա՝ ապահովելով հարգանք բոլոր պատվիրակությունների ազգային, կրոնական և մշակութային արժեքների և առանձնահատկությունների նկատմամբ:

Ռազմավարական ստեղծագործական հայեցակարգը նախատեսված է լայն կիրառության և շարունակական զարգացման հնարավորությամբ: Այն կոչված է ՀՀ հասարակությանը հասցնելու՝ *COP17*-ի իրադարձային նշանակությունը, ինչպես նաև միջազգային հանրությանը ներկայացնելու Հայաստանը որպես վստահելի գործընկեր և գլոբալ բնապահպանական օրակարգում ակտիվ դերակատար:

3. Մեդիա ռազմավարություն

Մեդիա ռազմավարությունը սահմանում է *COP17* հաղորդակցության տարածման ամբողջական համակարգը՝ ապահովելով ոչ միայն ներկայություն տարբեր հարթակներում, այլ նաև դրանց համադրված և նպատակային օգտագործում՝ առավելագույն ազդեցության հասնելու համար:

Այն ներառում է ինչպես ոչ թվային, այնպես էլ թվային մեդիա ալիքների համակցված պլանավորում՝ ձևավորելով միասնական մեդիա էկոհամակարգ, որտեղ յուրաքանչյուր հարթակ ունի հստակ դեր և նպատակը:

Մեդիա ռազմավարության շրջանակում իրականացվում է՝
Մեդիա դաշտի վերլուծություն և ալիքների ընտրություն
• առկա մեդիա հարթակների ուսումնասիրություն և գնահատում

• նպատակային ալիքների ընտրություն՝ ըստ լսարանների և հաղորդակցման խնդիրների
• յուրաքանչյուր ալիքի դերի սահմանում ընդհանուր համակարգում

4. PR աջակցություն և միջազգային մեդիա համագործակցություն

PR ուղղությունը հանդիսանում է *COP17* հաղորդակցման ռազմավարության առանցքային բաղադրիչ, որի միջոցով ապահովվում է միջոցառման ներկայությունը տեղեկատվական դաշտում՝ որպես հանրային և մասնագիտական օրակարգում կարևոր թեմա, այլ ոչ թե գովազդ:

Տվյալ ծառայությունը համադրում է նարատիվի ձևավորումը, բովանդակային համակարգումը և մեդիա համագործակցությունները՝ ապահովելով *COP17*-ի հստակ և վերահսկելի դիրքավորումը ինչպես միջազգային, այնպես էլ ներքին լսարանների համար: Միաժամանակ ձևավորվում է այնպիսի հաղորդակցման միջավայր, որտեղ *COP17*-ը ներկայացվում է որպես լայն հանրային և մասնագիտական հետաքրքրություն ներկայացնող գործընթաց՝ կենտրոնանալով *COP17*-ի բովանդակային, բնապահպանական և տնտեսական նշանակության վրա:

Ծառայության շրջանակ՝

4.1 PR ուղղության խորհրդատվական ուղեկցում և նարատիվի համակարգում

Տվյալ բաղադրիչը ուղղված է PR հաղորդակցության բովանդակային ամբողջականության ապահովմանը՝ համապատասխանեցված միջազգային պահանջներին և տարբեր լսարանների ընկալման առանձնահատկություններին:
Ծառայությունը ներառում է՝
• բովանդակային ուղեցույցերի մշակում՝ մամուլի նյութերի, հարցազրույցների և հրապարակումների համար
• PR ուղղությամբ խորհրդատվական ներգրավվածություն առանձին նախագծերի շրջանակում՝իմիջային միջոցառումների և այլ նախաձեռնությունների համար
• PR լուսաբանման բովանդակային և վիզուալ ուղղորդում՝ բովանդակային ուղերձների համապատասխանությունը և միասնական ներկայացումը ապահովելու համար

5. Նախագծի կազմակերպում և կառավարում

Ծրագրի արդյունավետ իրականացման համար կիրառվում է կենտրոնացված կառավարման մոդել, որի շրջանակում նախագծի ղեկավարումը իրականացվում է որպես միասնական կառավարման շրջանակ՝ ընդգրկելով ռազմավարական, ստեղծագործական, մեդիա և արտադրական բոլոր ուղղությունները:
Նախագծի կառավարումը նպատակ ունի ապահովել ոչ միայն աշխատանքների կազմակերպումը, այլ դրանց փոխկապակցվածությունը, ժամանակին իրականացումը և վերջնական արդյունքի համապատասխանությունը սահմանված ռազմավարական նպատակներին:

Ծառայությունը ներառում է՝
❖ **Ռազմավարական և գործառնական պլանավորում**
  • նախագծի ամբողջական ճանապարհային քարտեզի մշակում
  • աշխատանքների ժամանակացույցի ձևավորում, պարբերական վերանայում ըստ իրավիճակի
  • տարբեր ուղղությունների (մեդիա, բովանդակություն, PR, արտադրություն) համաժամեցում
❖ **Համակարգում և միջթիմային կառավարում**
  • բոլոր ներգրավված թիմերի և ենթակապալառուների աշխատանքների համակարգում
  • հաղորդակցության միասնական հոսքի ապահովում տարբեր կողմերի միջև
  • որոշումների կայացման գործընթացի կազմակերպում և արագ արձագանքման մեխանիզմների ներդրում

- **Արտադրության վերահսկողություն**
  - բոլոր փուլերում աշխատանքների կատարման մշտադիտարկում
  - տեխնիկական առաջադրանքների համապատասխանության վերահսկում
  - արդյունքի որակի ապահովում և համապատասխանեցում հաստատված կոնցեպտներին
- **Ռիսկերի և փոփոխությունների կառավարում**
  - հնարավոր ռիսկերի նախապես նույնականացում և կանխարգելում
  - օպերատիվ խնդիրների լուծում և գործընթացների համապատասխանեցում
  - փոփոխությունների կառավարում՝ ռազմավարական նպատակների պահպանմամբ

6. Ներգրավվող մասնագետներ

Նախագիծն իրականացվում է լայն մասնագիտական թիմի ներգրավմամբ, որը ձևավորվում է նախագծերի առանձնահատկություններին և մասնագիտական պահանջներին համապատասխան և կարող է ընդգրկել ինչպես հիմնական թիմի, այնպես էլ ենթակապալառուների ռեսուրսները:

Ռազմավարական և կառավարման թիմ

- Ծրագրի ղեկավար
- PR ռազմավար
- Մեդիա ռազմավար
- Թվային ռազմավար
- Մարքեթինգային վերլուծաբան
- Միջազգային հարաբերությունների խորհրդատու

Ստեղծագործական թիմ

- Ստեղծագործական տնօրեն
- Արտ տնօրեն
- Քոփիրայթերներ

PR և մեդիա թիմ

- PR մասնագետներ
- Մեդիա կապերի մասնագետ
- Մեդիա պլանավորող
- Մեդիա գնման մասնագետ
- Մոնիթորինգի մասնագետ

Սույն փուլային ծառայությունը հանդիսանում է ամբողջ ծրագրի հաղորդակցման տրամաբանությունը, կառուցվածքը և ուղղությունը՝ ապահովելով, որ մնացած բոլոր հավելվածները ձևավորվեն և իրականացվեն մեկ միասնական համակարգի շրջանակում՝ առանց բովանդակային, հաղորդագրական և ռազմավարական շեղումների:

Ֆինանսական գնահատական

Հաղորդակցման ռազմավարություն և PR աջակցության ստեղծագործական ծառայությունների ընդհանուր բյուջեն կազմում է մինչև 54 600 000 ՀՀ դրամ (ներառյալ հարկեր և պարտադիր այլ վճարներ):

Հավելված №3
«18» «06» 2026թ. կնքված
համաձայնագիր №3
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

h/h	**Ապրանքի անվանումը (ներառյալ ապրանքանիշը)**	**Չափի միավորը**	**Քանակը**	**Միավորի գինը, ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/**	**Ընդհանուր գումարը, ՀՀ դրամ/ներառյալ ԱԱՀ/**
1	Թիրախային լսարանների քարտեզագրման եւ բովանդակային ուղերձների մշակման ծախսեր	դրամ	1	6500000	6500000
2	***Արշավի փուլային կառուցվածքի մշակում եւ ժամանակացույցի կառուցում***	դրամ	1	5500000	5500000
3	***Հաղորդակցման ալիքների սահմանման ծախսեր***	դրամ	1	4500000	4500000
4	***PR աջակցություն և միջազգային մեդիա համագործակցություն***	դրամ	1	5000000	5000000
5	PR ուղղության խորհրդատվական ուղեկցում	դրամ	1	9500000	9500000
6	Բովանդակային ուղեցույցերի մշակում՝ մամուլի նյութերի, հարցազրույցների և հրապարակումների համար	դրամ	1	5500000	5500000
7	Մեդիա ռազմավարություն մշակում, ներառյալ վերլուծություն, ալիքների ընտրություն եւ տեղաբաշխման տրամաբանության սահմանման ծախսեր	դրամ	1	8600000	8600000
8	Ռազմավարական ստեղծագործական հայեցակարգի մշակում	դրամ	1	9500000	9500000
	Ընդամենը՝				**54600000**